

Ազգային ժողովի մեծարգո՝ նախագահ,
Հարգելի՛ տիկին Հակոբյան,
Գերաշնո՛րհ հայրեր,
Սիրելի՛ հայրենակիցներ,

Նախ կցանկանայի երախտիքի խոսքեր ասել այս արտաքին օրակարգի ուղղության 4 նիստերի բոլոր զեկուցողներին և մասնակիցներին չափազանց խորքային, շահագրգիռ, բովանդակային քննարկումների համար: Այդ բոլորն ամբողջական ամփոփելու համար, իհարկե, ժամանակ է պահանջվում. այն, ինչ որ ես հիմա կներկայացնեմ, նախնական ամփոփումն է: Բնական է՝ քննարկվեցին հարցեր՝ կապված տարբեր երկրների հետ մեր հարաբերությունների հաստատման, խորացման հարցում Մփյուռքի դերակատարության մասին: Առաջին հերթին, բնական է, դա վերաբերում է մեր երկու հարևաններին՝ Վրաստանին և Իրանին: Ընդհանուր առմամբ, շատ հետաքրքիր էր քննարկման այն հատվածը, որը վերաբերում էր խորհրդարանական դիվանագիտությանը և հանրային դիվանագիտությանը, այն հանգամանքին, որ խորհրդարանական դիվանագիտությունը ներգրավական է և հնարավորություն ունի նաև ավելի սերտ աշխատելու Մփյուռքի կառույցների հետ:

Կարևորագույն խնդիրներից մեկը, որը քննարկվեց, Ցեղասպանության ճանաչումը, դատապարտումը, ցեղասպանությունների կանխարգելումն էր: Հաջորդ տարի՝ 2018թ., լրանալու է ցեղասպանությունների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 70-ամյակը, և ժամեր առաջ Հանրապետության Նախագահը ՄԱԿ-ի ամբիոնից հայտարարեց, որ մենք հանդես ենք գալու նոր նախաձեռնություններով: Հիշեցնեմ, որ Հայաստանը մշտապես հանդես է եկել ցեղասպանությունների կանխարգելմանն ուղղված տարբեր նախաձեռնություններով: Որպես օրինակ բերեմ, որ 2015թ. դեկտեմբերի 9-ը հռչակվեց ՄԱԿ-ի կողմից՝ որպես Ցեղասպանության գոհերի հիշատակի և արժանապատվության օր: Եվ այդ տեսակետից, մենք մեր արդար գիծը տանելով Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ, ընկալվում ենք նաև որպես առաջամարտիկ ցեղասպանությունների կանխարգելման գործում:

Դա չափազանց կարևոր է նաև Մերձավոր Արևելքում տեղի ունեցող իրադարձությունների լույսի ներքո: Եվ դա նույնպես ներառված էր քննարկման օրակարգում: Այդ տարածաշրջանում ականատես ենք ցեղասպան քաղաքականության դրսևորումների՝ ուղղված ազգային և կրոնական փոքրամասնությունների դեմ:

Բնական է՝ խոսվեց, որ կարևոր է, որ ցեղասպանությունների ճանաչման ուղղությամբ առկա գործընթացը նոր թափով շարունակվի, քանի որ երբ ամեն մի նոր երկիր ճանաչում է ցեղասպանությունը, այդ ալիքը վերջ ի վերջո բերում է նրան, որպեսզի Թուրքիայում հասունանա այն մթնոլորտը, որ ինքը՝ Թուրքիան, պետք է ճանաչի Ցեղասպանությունը: Այդ տեսակետից արժանի է հիշատակման Թուրքիայի

խորհրդարանի պատգամավոր Գարո Փայլանի այն միտքը, որ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը և Հայաստանի հետ սահմանի բացումն անցնում է Թուրքիայում ժողովրդավարություն հաստատելու ճանապարհով, իսկ Թուրքիան ցավոք գնում է լրիվ այլ ճանապարհով: Եվ ինչպես պարոն Փայլանը, այնպես էլ նրա գործընկերները, այսօր պայքարում են հենց նրա համար, որպեսզի Թուրքիան, այնուամենայնիվ, գնա ժողովրդավարական ճանապարհով: Սակայն մենք տեսնում ենք միանգամայն այլ ընթացք: Պատահական չէ, որ Յուրիխյան արձանագրությունները ժամանակին տապալվեցին, և դա համընկավ հենց այն գործընթացի հետ, որ Թուրքիան սկսեց շեղվել այն ուղուց, որը որդեգրել էր՝ գնալով դեպի Եվրոպա, և սկսեց գնալ, ըստ էության, բռնապետության ճանապարհով: Արդյունքում Հանրապետության Նախագահը կրկին ՄԱԿ-ի ամբիոնից մի քանի ժամ առաջ հայտարարեց՝ որ թող չմտածեն, որ Թուրքիայի իշխանությունները «կարող են առհավետ պատանդ վերցնել այդ փաստաթղթերը: Մենք 2018թ. գարուն ենք մտնելու առանց այդ, ինչպես, ցավոք սրտի, փորձը ցույց տվեց, սին արձանագրությունների»:

Խորքային քննարկում ծավալվեց՝ կապված ժխտողականության դեմ պայքարի հետ: Մենք բոլորս գիտակցում ենք՝ ինչքան կարևոր է պայքարը ժխտողականության դեմ: Մյուս կողմից, խնդիր է այն հանգամանքը, որ երկրները, որտեղ մենք բարձրաձայնում ենք այդ հարցը, ժխտողականությունը ընկալում են նաև որպես խոսքի ազատության սահմանափակում: Այդ տեսակետից կարևոր է նորովի մոտենալ այդ հարցին: Առաջարկություններ կան, մասնավորապես, դրա մասին ասեց Կիրո Մանոյանը, որ իրավաբաններն ավելի խորն ուսումնասիրեն հետևյալ խնդիրը. պատժելի է ժխտողականությունն այն դեպքում, երբ խոսքը գնում է պետության կողմից ծրագրավորված քաղաքականության մասին, որը հանգեցրել է ցեղասպանության, բայց ոչ ինքնին հարցականի տակ դնելու մասին, թե դա ցեղասպանություն է արդյոք, թե ոչ: Թվում է՝ դա աննշան երանգ է, սակայն էական դրույթ: Դա շատ լուրջ առաջարկություն էր, հատկապես Ֆրանսիայի և Արևմտյան այլ երկրների փորձից հետո, որը պահանջում է վերլուծություն, որպեսզի մենք ավելի հստակ պատկերացնենք և ավելի համահունչ գործենք այն արժեքներին, որոնք կան տարբեր երկրներում՝ մեր նպատակներին հասնելու համար:

Բնական է՝ կարևորվեց այն խնդիրը, որ Ցեղասպանության ճանաչման և ցեղասպանությունների կանխարգելման հարցում Սփյուռքի կողմից գործադրված բոլոր ջանքերին զուգահեռ միաժամանակ ավելի մեծ ուշադրություն դարձվի այն հարցերին, որոնք վերաբերում են Արցախի Հանրապետությանը: Թեև դա առանց այն էլ արվում է, սակայն կոչ ենք անում մասնակիցներին՝ ավելի եռանդուն կերպով միանալ այդ գործընթացին:

Խոսվեց կարգավորման գործընթացի մասին, որը հանգամանալից ներկայացրեց արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը: Բոլորիս համար ակնհայտ է, որ կարգավորումը դոփում է տեղում մի շատ պարզ պատճառով. Ադրբեջանը գործում է հակառակ և՛ միջազգային իրավունքին, և՛ միջնորդ պետությունների՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի հորդորներին և կոչերին: Ավելին, 2016թ. շատ հստակ ցույց տվեց այն, ինչ որ հայկական կողմերի համար վաղուց հայտնի էր. Ադրբեջանի իրական դեմքը: Վերջինիս համար բանակցային գործընթացն ընդամենը քող է՝ ռազմական ուժ կուտակելու, իր կեղծիքը, իր քարոզչական պատերազմը շարունակելու համար: Իսկ 2016թ. իրադարձությունները կրկին ազդեսիա էին, դա 90-ականների սկզբի ազդեսիայի կրկնությունն էր, որին անդրադարձ նույնպես կատարվեց:

Հիշեցնեմ, որ 1994թ. եռակողմ համաձայնագիրը՝ Ադրբեջանի, Արցախի, Հայաստանի միջև, համաձայնագիր է ռազմական գործողությունների դադարեցման և կրակի դադարեցման ռեժիմը հաստատելու մասին: Ես ուշադրություն եմ հրավիրում «ռազմական գործողությունների դադարեցման» բառակապակցության վրա: Այդ տեսակետից միշտ եղել են հրադադարի ռեժիմի պարբերաբար խախտումներ, բայց այն, ինչ եղավ 2016թ. ապրիլին, բացահայտ ռազմական գործողությունների վերսկսում էր: Այսինքն՝ Ադրբեջանը կրկին հայտնվեց նույն ազդեսորի կարգավիճակում: Այդ ժամանակ եղան մարդասիրական իրավունքի բազմաթիվ կոպիտ ոտնահարումներ, ինչը հանգամանալից ներկայացվեց Արցախի մարդու իրավունքների պաշտպանի կողմից: Այն փաստաթղթերը, որը նա ներկայացրեց մեր նիստի ժամանակ, նաև ներկայացված են և շարունակելու են ներկայացվել տարբեր միջազգային ասոցիացիաներ:

Բավական հետաքրքիր էին Հայաստան-Արցախ-Սփյուռք համագործակցության շուրջ քննարկումները՝ որպես կարևորագույն ուղղություն: Մեծ ուշադրությամբ լսեցինք Արցախի արտաքին գործերի նախարարի ելույթը, և բնական է՝ այս պայմաններում, երբ առկա է Ադրբեջանի այդպիսի կեցվածք, Արցախի արտգործնախարարը նախ երախտագիտություն հայտնեց Սփյուռքի կառույցներին այն աջակցության համար, որը ստանում է Արցախի պետությունը, և երկրորդը նաև հնչեցրեց կոչ՝ ջանքերն էլ ավելի համալրել Արցախի միջազգային ճանաչման շուրջ: Ընդհանուր առմամբ խոսվեց նաև Հայաստան-Արցախ-Սփյուռք համագործակցության մեջ նոր ժամանակակից տեխնոլոգիաների և մեթոդների կիրառման մասին:

Արտաքին մարտահրավերներին դիմակայելու հարցում խոսվեց Հայաստանի հիմնական խնդիրներից մեկի՝ արտագաղթի մասին: Այս ամբիոնից Հանրապետության Նախագահը կոչ արեց, որ արտագաղթը պետք է ոչ միայն վերացվի, այլ վերածվի ներգաղթի: Որպես Սփյուռքի հիմնական խնդիրներ մեր սփյուռքահայ գործընկերները արձանագրեցին, որ Սփյուռքը նոսրանում է, իսկ երիտասարդությունը կորցնում է հետաքրքրությունը քաղաքականության նկատմամբ: Երիտասարդության առավել

ակտիվ ներգրավումը քաղաքական դաշտում և քաղաքականացումը ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ կարևոր նպատակ է ոչ միայն Սփյուռքի, այլ նաև Հայաստանի և Արցախի համար: